ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 17/133181-26

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՏՈՆ ՎԼԱՍՈՎԻՆ
(Էլ. հասցե՝ druidvav@gmail.com)

Հարգելի՛ քաղաքացի,

Ի պատասխան Ձեր՝ 08.09.2026թ. Երևանի քաղաքապետարան ուղղած հ. Դ-96984-26 դիմումի, տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից մշակվել է Երևան քաղաքում օդի աղտոտվածության նվազեցման քառամյա ծրագիրը, որի նպատակն է նվազեցնել արտանետումները աղտոտման հիմնական աղբյուրներից, բարելավել օդի որակի մոնիթորինգի համակարգը։ Ծրագրում հաշվի են առնվել Երևան քաղաքում օդի աղտոտման հիմնական աղբյուրները՝ շինարարություն, տրանսպորտ, հանքեր/բետոնհանգույցներ, ջեռուցում, աղբավայր, և ներկայացվել են թիրախային գործողություններ այդ աղտոտման աղբյուրներից արտանետումների նվազեցման, ինչպես նաև իրավիճակը բարելավելու միջոցառումներ (կանաչ ֆոնդի ավելացում, կանաչապատման մեջ մշտադադալար բուսատեսակների ավելացում և այլն)։ Ստորև ներկայացվում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունները, նշելով նաև իրականացման վիճակը՝

1. Կարճաժամկետ

1) Շինհրապարակներում արտանետումների նկատմամբ ավելի խիստ չափորոշիչների սահմանում, (իրականացվել է 2025թ.)

2) Շինհրապարակում հողի, այդ թվում՝ ճանապարհների, խոնավության սահմանային թույլատրելի ցուցիչի սահմանում, (իրականացվել է 2025թ.)

3) Սորուն նյութերի տեղափոխումը միայն փակ փաթեթավորմամբ, (իրականացվել է 2025թ.)

4) Շինհրապարակում հողային ճանապարհները փոխարինել խճաքարով, (նախատեսվող)

5) Ջրային թնդանոթների պարտադիր կիրառում, որպես ջրախնայող տեխնոլոգիա, և փոշու նստեցմանառավել արդյունավետ մեթոդ, (իրականացվել է 2025թ.)

6) Սահմանված պահանջների ապահովումը փոխկապակցել Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված արտոնությունների,

ինչպես նաև ավարտական ակտի տրամադրման հետ, (իրականացվել է 2026թ.)

7) Տուգանքների սահմանաչափերի վերանայում (Երևանի նոր ՏԻՄ օրենքի շրջանակում տուգանքների ավելացում 10 անգամ,իրականացվել է 2026թ.)

8) Տրանսպորտային հոսքերի ավտոմատացված կառավարում՝ տրանսպորտի կառավարման կենտրոնի ստեղծում, (նախատեսվող)

9) Խստացնել տրանսպորտային միջոցների արտանետումների նկատմամբ հսկողությունը և աստիճանաբար հեռացնել խիստ աղտոտող մեքենաները, (նախատեսվող)

10) Գոտիավորում. Որոշ փողոցներում երթևեկության սահմանափակում (պիկ ժամերին, հանգստյան օրերին) (նախատեսվող)

11) Վերգետնյա և/կամ ստորգետնյան կայանատեղիների կառուցում քաղաքի հիմնական մուտքերի շրջակայքում, (նախատեսվող)

12) Փոշու արտանետումների մոնիթորինգ. Իրականացնել մոնիթորինգի սարքերի տեղադրում հանքերում և բետոնհանգույցներում, (իրականացվել է 2026թ.)

13) Փոշեճնշող միջոցների և արդիականացված արդյունահանման տեխնիկայի օգտագործման պահանջի սահմանում, (իրականացվել է 2026թ.)

14) Նուբարաշենի գործող աղբավայրի կառավարման իրականացում համայնքի կողմից՝խստացված վերահսկողությամբ: (իրականացվել է 2025թ.)

2. Միջնաժամկետ

1) Օդի որակի մոնիթորինգի ցանցի ընդլայնում,

2) Սոցիալապես խոցելի տնային տնտեսություններին աջակցության տրամադրում՝ ջեռուցման նպատակով արևային էներգիայի օգտագործման համար,

3) Տանիքային այգիներ և ուղղահայաց կանաչապատման խթաններ խիտ կառուցապատված տարածքներում,

4) Ցածր արտանետումներով և էլեկտրական ավտոբուսներով (էլեկտրատրանսպորտով) հասարակական տրանսպորտի ցանցի ընդլայնում,

5) Ընդերքօգտագործման իրավունքներն ավարտված, դադարեցված հանքավայրերում իրականացնել ռեկուլտիվացիայի ծրագրեր՝ անտառտնկարկների միջոցով,

6) Սահմանել և կիրառել օդի որակի վերաբերյալ տեղական կանոններ բնակարանների ջեռուցման համար, ներառյալ վերահսկել վառելիքի տեսակները, որոնք կարող են այրվել քաղաքային վայրերում ձմռան ամիսներին:

3. Երկարաժամկետ

1) Աղտոտման նվազեցումը (անկախ աղտոտման աղբյուրներից) երկարաժամկետ հեռանկարում հնարավոր է կանաչ տարածքների էական ընդլայնման պայմաններում, ընդ որում ոչ միայն Երևան քաղաքի ներսում, այլ նաև քաղաքից դուրս, քաղաքը գոտևորող հարյուրավոր հեկտարներով

նոր կանաչ գոտիների ստեղծմամբ, հիմնականում շեշտը դնելով մշտադալար ասեղնատերև ծառատեսակների կիրառման վրա, ինչպես նաև հաշվի առնելով տարվա ընթացքում քամիների գերակշռող ուղղությունները,

2) Կանաչ միջանցքների ստեղծում՝ օդի հոսքը և օդի մաքրումը բարելավելու համար,

3) Քաղաքային կոշտ թափոնների նոր սանիտարական աղբավայրի կառուցում,

4) Կոշտ կենցաղային թափոնների վերամշակման գործարանի հիմնում,

5) Նուբարաշենի և Աջափնյակի գոյություն ունեցող աղբավայրերի փակում։

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի տեղեկատվության համաձայն՝ Երևան քաղաքում տրանսպորտային միջոցների արտանետումների նվազեցման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից 2026 թվականին ձեռք են բերվել 45 միավոր նոր և ժամանակակից տրոլեյբուսներ, որոնք շարժման ընթացքում լիցքավորվելու և առանց կոնտակտային ցանցի մինչև 60 կմ երթևեկելու հնարավորություն ունեն։ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տեղեկատվության համաձայն՝ ընկերության սպասարկմանը հանձնված մայրաքաղաքի ներհամայնքային կանոնավոր երթուղիները սպասարկող ընդհանուր թվով 856 տրանսպորտային միջոցներից, այդ թվում՝ 756 ավտոբուսից և 100 միկրոավտոբուսից, դիզելային վառելիքով շահագործվում են HIGER մակնիշի 107 ավտոբուս և GAZEL SITI մակնիշի 100 միկրոավտոբուս, իսկ ZHONG TONG մակնիշի 562 և MAN մակնիշի 87 ավտոբուսներ շահագործվում են սեղմված բնական գազով։ Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2025-2026 թվականների ընթացքում երթուղիները սպասարկող ընկերության ավտոբուսների և միկրոավտոբուսների ընդհանուր թվաքանակում ցածր արտանետումներով տրանսպորտային միջոցների տեսակարար կշիռը կազմում է 75,82 տոկոս։

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ, ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԳՈՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Ստորագրող
ԳՈՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
3208920210

2026-09-26 16:22:24 GMT+4

Կատարող՝
Բնապահպանության վարչություն
Հեռ.՝ (011)514-188